

**Հարցաշար**  
**Առարկայական օլիմպիադայի**  
**«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի**  
**հանրապետական փուլ**  
**11-րդ դասարան - 120 րոպե**

*№ 1-4*

*Ընտրովի պատասխանով առաջադրանքներ*

1. Հայոց ո՞ր կաթողիկոսի օրոք է կաթողիկոսական աթոռը տեղափոխվել Արգինա:  
1) Մաշտոց Ա Եղիվարդեցի  
2) Սարգիս Ա Սևանցի  
3) Անանիա Ա Մոկացի  
4) Հովհաննես Ե Դրասխանակերտցի *(0,5 միավոր)*
  
2. Միջնադարյան ո՞ր հեղինակն է «Հայսմավուրք»-ի վերջին խմբագրողը. *(0,5 միավոր)*  
1) Ներսես Լամբրոնացի  
2) Գրիգոր Բ Վկայասեր  
3) Գրիգոր Տաթևացի  
4) Գրիգոր Խլաթեցի
  
3. Հայոց կաթողիկոսներից ո՞վ էր ձեռնադրել վրաց Կյուրիոն կաթողիկոսին՝ *(0,5 միավոր)*  
1) Մովսես Բ Եղիվարդեցի  
2) Աբրահամ Ա Աղբաթանեցի  
3) Ներսես Բ Բագրևանդցի  
4) Կոմիտաս Ա Աղցեցի
  
4. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.  
«Պատմությունը պետք է ունենա անհատի, մարդու և ժողովրդի վարքին ուղղություն տալու նպատակ»:  
1) Մաղաքիա արք. Օրմանյան  
2) Ղևոնդ Ալիշան  
3) Միքայել Զամյան  
4) Նիկողայոս Ադոնց *(0,5 միավոր)*

*№ 5-8*

*Կառուցված պատասխանով առաջադրանքներ*

5. Կ.Պոլսի հայոց պատրիարքի աթոռանիստը Գումգափուի \_\_\_\_\_  
Մայր եկեղեցին է: *(1 միավոր)*
  
6. Նաղիբ շահի թագադրության արարողության ժամանակ շահական իշխանության խորհրդանիշ սուրբ նրա մեջքին կապել է \_\_\_\_\_ կաթողիկոսը:  
*(1 միավոր)*

7. \_\_\_\_\_ մարդկային մեղքերի և մոլությունների մասին գրում է. «Ընչասիրությունը զուգակից է կռապաշտության»: (1 միավոր)

8. Այն խաչքարերը, որոնց քանդակագարդ էրեսին պատկերված են Քրիստոսի խաչելության տեսարաններ, կոչվում են «\_\_\_\_\_»: (1 միավոր)

**№ 9-10**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից**

9. Հեղինակների անունները համապատասխանեցնել աշխատությունների վերնագրերին. (1 միավոր)

- |                      |  |
|----------------------|--|
| 1. Վարդան Այգեկցի    | ա) «Հաճախապատում»                      |
| 2. Ստեփանոս Օրբելյան | բ) «Մատյան ողբերգության»               |
| 3. Մկրտիչ Խրիմյան    | գ) «Կնիքհաւատոյ»                       |
| 4. Գրիգոր Լուսավորիչ | դ) «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» |
| 5. Հովհաննես Օձնեցի  | ե) «Ընդդեմ պավլիկյանների»              |
| 6. Գրիգոր Նարեկացի   | զ) «Դրախտի ընտանիք»                    |
|                      | է) «Սուրբ Կաթողիկէի ողբը»              |

1	
2	
3	
4	
5	
6	

10. Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել իրադարձություններին.

(1 միավոր)

1. Մարգիս Ա Սևանցի
2. Միմեոն Ա Երևանցի
3. Մաշտոց Ա Եղիվարդեցի
4. Կիրակոս Ա Վիրապեցի
5. Ստեփանոս Ե Սալմաստեցի
6. Գևորգ Բ Գառնեցի

1	
2	
3	
4	
5	
6	

- ա) Ս. Առաքելոց և Ս. Աստվածածինեկեղեցիների կառուցումը Սևանակղզում
- բ) «Տերանց հայոց» գաղտնի խորհրդածողովի գումարումը Էջմիածնում
- գ) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սսից Էջմիածին
- դ) Երևանի Ս. Ջորավոր եկեղեցու կառուցումը
- ե) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Զվարթնոց
- զ) Տպարանի հիմնադրումը Էջմիածնում
- է) Գագիկ I Բագրատունու և Դավիթ Անհողինի ռազմական բախման կանխումը

**№ 11**

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից**

**11. Կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման հաջորդականության.  
(1 միավոր)**

- ա) Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի
- բ) Մկրտիչ Ա Խրիմյան
- գ) Ներսես Ե Աշտարակեցի
- դ) Ղուկաս Ա Կարնեցի
- ե) Դանիել Ա Սուրմառեցի
- զ) Մակար Ա Թեղուտցի
- է) Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի
- ը) Հովհաննես Ը Կարբեցի

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	

**№ 12-13**

***Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից***

**12. «Պիտի տքնենք վերանորոգելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր և եկեղեցիներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուներն են և հայ ճարտարապետության փառքի զմայլելի հուշարձանները»:**

13«Նա կյանքն էր դրել իր երկրի համար. և կմեռներ քաջի անվան համար, իր բնիկ տերերի համար, իր երկրի բնակչության համար, քրիստոնեական հավատի համար, Աստծուն հավատացող ու Քրիստոսի անունով մկրտված ժողովրդի համար, եկեղեցիների համար, և նրանց սրբազան սպասների համար, Քրիստոսի վկայարանների համար, Աստծու հետ ուխտի համար...»:

**1. Ո՞ր պատմիչն է մեջբերված հատվածի հեղինակը: (1 միավոր)**

**2. Ո՞ւմ մասին է այդպես արտահայտվել պատմիչը: (1 միավոր)**

**№ 14-15**

***Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացությունն պահանջող առաջադրանք***

**14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում *n* ըն է սխալ: (0,5 միավոր)**

Խոնարհություն, եղբայրասիրություն, բարություն, աշխատասիրություն, ողորմածություն, ժուժկալություն

**14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ:** (0,5 միավոր)  
Պողոս, Տիմոթ, Մումիկ, Վեցիկ, Ռոսլին, Վահրամ, Շնորհավոր

---

---

**15.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավելացնել տվյալ շարքին համապատասխանող ևս մեկ անվանում:** (1 միավոր)

- ա. Գրիգոր Բ Վկայասեր, Ներսես Դ Շնորհալի, Գրիգոր Զ Ապիրատ ...
  - բ. Խաչիկ Ա Արշարունի, Սարգիս Ա Սևանցի, Պետրոս Ա Գետադարձ ...
  - գ. Գրիգոր Զ Ապիրատ, Պետրոս Ա Գետադարձ, Գևորգ Բ Գառնեցի ...
- 
- 

**15.2. Գտնե լճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված:** (1 միավոր)

- ա. Սիս, Աշտիշատ, Հռոմկլա, Շահապիվան
  - բ. Արտաշատ, Տաթև, Աշտիշատ, Աղթամար
  - գ. Շահապիվան, Տարսուն, ՇուղրիԿարմիրվանք, Կարս
- 
- 

**15.3. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավելացնել տվյալ շարքին համապատասխանող ևս մեկ անվանում:** (1 միավոր)

- ա. Հաղպատ, Սանահին, Բջնի...
  - բ. Բջնի, Արտազ, Հաղպատ, ...
  - գ. Բջնի, Կեչառիս, Գանձասար...
- 
- 

**№ 16**

**Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից (0,5 X 4 = 2 միավոր)**

- ա. Պատմաճարտարապետական ո՞ր հուշարձաններն են պատկերված
- բ. Նշել դրանցից յուրաքանչյուրի գտնվելու վայրը:


1.



3.



2.



4.



1. ա \_\_\_\_\_ Բ \_\_\_\_\_

2. ա \_\_\_\_\_ Բ \_\_\_\_\_

3. ա \_\_\_\_\_ Բ \_\_\_\_\_

4. ա \_\_\_\_\_ Բ \_\_\_\_\_

**17. Շարադրանք (2 միավոր)**

1. Թվարկե՛ք Հայոց եկեղեցու յոթ խորհուրդները: Որո՞նք են դրանցից պարտադիր քրիստոնյայի համար:
2. Ներկայացրե՛ք երկրորդ տիեզերական ժողովը:
3. Ներկայացրե՛ք եկեղեցի-պետություն համագործակցությունը Գարեգին Ա կաթողիկոսի օրոք:
4. Ի՞նչ է ժամերգությունը: Թվարկե՛ք Հայոց եկեղեցու ժամերգությունները: